Նման պայմաններում, Դատարանը գտնում է, որ պետք է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոն և Տիտոգրադյան փողոցների հատման խաչմերուկը Խաղաղ Դոն փողոց, Խաչիկ Դաշտենց փողոց և Նուբարաշենի խճուղի խաչմերուկին միացնող ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման նպատակով 2025 թվականի հունիսի 03-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-25/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ «Սուֆետ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը:

7. Դատական ծախսեր.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանը նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից հօգուտ Սուֆետ ՍՊ ընկերության պետք է բռնագանձել բավարարված հայցապահանջին համամասնորեն պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Սուֆետ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «Արմստրոյ» ՍՊ ընկերության և «Պռոլաբ» ՍՊ ընկերության՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոն և Տիտոգրադյան փողոցների հատման խաչմերուկը Խաղաղ Դոն փողոց, Խաչիկ Դաշտենց փողոց և Նուբարաշենի խճուղի խաչմերուկին միացնող ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման նպատակով 03.06.2025 թվականի թիվ 1

որոշմամբ հայտարարված թիվ «ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-25/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ «Սուֆետ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել.

1.1. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոն և Տիտոգրադյան փողոցների հատման խաչմերուկը Խաղաղ Դոն փողոց, Խաչիկ Դաշտենց փողոց և Նուբարաշենի խճուղի խաչմերուկին միացնող ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման նպատակով 2025 թվականի հունիսի 03-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-25/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ «Սուֆետ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ Սուֆետ ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am